ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

« » « » 2013 թվականի N -Ն

ԻՐԱՎԱԿԱՆ ՕԺԱՆԴԱԿՈՒԹՅԱՆ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ ԿԱՐԳԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Հոգեբուժական օգնության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 7-րդ հոդվածի 5-րդ մասը՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը ***որոշում է.***

1. Սահմանել իրավական օժանդակության տրամադրման կարգը՝ համաձայն հավելվածի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2014 թվականի հունվարի 1-ից:

Հավելված

ՀՀ կառավարության 2013 թվականի

« » « »-ի N -Ն որոշման

Կ Ա Ր Գ

ԻՐԱՎԱԿԱՆ ՕԺԱՆԴԱԿՈՒԹՅԱՆ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ

I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Սույն կարգով սահմանվում է հոգեբուժական կազմակերպությունում բուժվող հոգեկան խանգարումներ ունեցող անձին իրավական օժանդակություն (այսուհետ՝ իրավական օժանդակություն) տրամադրելու ընթացակարգը:

2. Իրավական օժանդակությունը ներառում է «Փաստաբանության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 41-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված անվճար իրավաբանական օգնությունը, այդ թվում նաև՝ հոգեբուժական կազմակերպությունում գտնվելու և բուժման հետ կապված հարցերի, հոգեկան խանգարումներ ունեցող անձի (այսուհետ՝ անձ) իրավունքների և պարտականությունների վերաբերյալ խորհրդատվությունը:

II. ԻՐԱՎԱԿԱՆ ՕԺԱՆԴԱԿՈՒԹՅԱՆ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ ՀԱՄԱՐ ԴԻՄԵԼԸ

3. Իրավական օժանդակությունը տրամադրվում է անձի կամ նրա օրինական ներկայացուցչի դիմումի հիման վրա՝ Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի հանրային պաշտպանի գրասենյակի (այսուհետ՝ հանրային պաշտպանի գրասենյակ) նշանակած փաստաբանի կողմից:

4. Անձը կամ նրա օրինական ներկայացուցիչը հանրային պաշտպանի գրասենյակի ղեկավարին հասցեագրված՝ իրավական օժանդակության տրամադրման դիմումը անձամբ կամ հոգեբուժական կազմակերպության վարչակազմի միջոցով ներկայացում է հանրային պաշտպանի գրասենյակ:

5. Դիմումին կցվում է անձի՝ հոգեբուժական կազմակերպությունում բուժում անցնելու մասին տեղեկանք: Հոգեբուժական կազմակերպությունը նշված տեղեկանքը անձի կամ նրա օրինական ներկայացուցչի պահանջով անմիջապես տրամադրում է նրանց, իսկ եթե սույն կետով նախատեսված դիմումը ուղարկվելու է հոգեբուժական կազմակերպության միջոցով, տեղեկանքը կցում է դիմումին:

6. Հոգեբուժական կազմակերպությունը սույն կարգի 4-րդ կետով նախատեսված դիմումը ստանալուն պես, բայց ոչ ուշ քան հաջորդ օրը պատվիրված նամակով ուղարկում է հանրային պաշտպանի գրասենյակ:

7. Սույն կարգի 4-րդ կետով նախատեսված դիմումի՝ հոգեբուժական կազմակերպության միջոցով հասցեատիրոջն ուղարկելու ծախսերը հոգում է հոգեբուժական կազմակերպությունը:

III. ԻՐԱՎԱԿԱՆ ՕԺԱՆԴԱԿՈՒԹՅԱՆ ՏՐԱՄԱԴՐՈՒՄԸ

8. Հանրային պաշտպանի գրասենյակի ղեկավարը սույն կարգի 4-րդ կետով նախատեսված դիմումը ստանալուն պես, բայց ոչ ուշ քան հաջորդ օրը, որոշում է կայացնում դիմումը բավարարելու և գործը հանրային պաշտպանին հանձնելու մասին, բացառությամբ սույն կարգի 9-րդ կետով նախատեսված դեպքերի:

9. Հանրային պաշտպանի գրասենյակի ղեկավարը մերժում է սույն կարգի 4-րդ կետով նախատեսված դիմումը միայն «Փաստաբանության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 41-րդ հոդվածի 6-րդ մասով նախատեսված հիմքով, կամ եթե դիմումի հետ մեկտեղ չի ներկայացվել սույն կարգի 5-րդ կետով նախատեսված տեղեկանքը:

10. Հանրային պաշտպանը գործը ստանալուն պես, բայց ոչ ուշ, քան հաջորդ օրը պարտավոր է տեսակցել անձին:

11. Եթե անձը գտնվում է հոգեբուժական հիվանդանոցում, ապա հիվանդանոցի վարչակազմը ապահովում է հանրային պաշտպանի անարգել մուտքն ու ելքը հիվանդանոցի՝ տեսակցության համար նախատեսված տարածք, ինչպես նաև անձի և հանրային պաշտպանի մեկուսի տեսակցությունը՝ հաշվի առնելով տվյալ հոգեբուժական կազմակերպության տնօրենի հաստատած ներհիվանդանոցային ռեժիմը:

III. ԻՐԱՎԱԿԱՆ ՕԺԱՆԴԱԿՈՒԹՅԱՆ ՏՐԱՄԱԴՐՈՒՄԸ ԴԱԴԱՐԵՑՆԵԼՈՒ ՀԻՄՔԵՐԸ

12. Իրավական օժանդակության տրամադրումը դադարեցվում է հանրային պաշտպանի գրասենյակի ղեկավարի որոշմամբ՝

1) անձի կամ նրա օրինական ներկայացուցչի դիմումի հիման վրա.

2) եթե անձը դուրս է գրվել հոգեբուժական կազմակերպությունից:

ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

«ԻՐԱՎԱԿԱՆ ՕԺԱՆԴԱԿՈՒԹՅԱՆ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ ԿԱՐԳԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՈՐՈՇՄԱՆ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Իրավական ակտի ընդունման անհրաժեշտությունը

«Իրավական օժանդակության տրամադրման կարգը սահմանելու մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության որոշման ընդունման անհրաժեշտությունը պայմանավորված է 2013 թվականի ապրիլի 30-ի «Հոգեբուժական օգնության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին» ՀՕ-28-Ն ՀՀ օրենքի ընդունմամբ, որով նախատեսված է, որ իրավական օժանդակության տրամադրման կարգը սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

Ընթացիկ իրավիճակը և խնդիրները

Ներկայումս բացակայում է վերը նշված օրենքով նախատեսված իրավական օժանդակության տրամադրման ընթացակարգը, հետևաբար նշված օրենքի՝ 2014թ. հունվարի 1-ից ուժի մեջ մտնելուց հետո, ՀՀ կառավարության համապատասխան որոշման բացակայության պարագայում հնարավոր չի լինի ապահովել հոգեկան խանգարումներ ունեցող անձի՝ որպես պետական երաշխիք նախատեսված իրավական օժանդակությունը:

Կարգավորման նպատակը և ակնկալվող արդյունքը

«Իրավական օժանդակության տրամադրման կարգը սահմանելու մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության որոշման ընդունմամբ հնարավոր կլինի ապահովել օրենքով նախատեսված անձանց պետության կողմից երաշխավորված անվճար իրավաբանական օգնության տրամադրումը:

ՏԵՂԵԿԱՆՔ N1

«ԻՐԱՎԱԿԱՆ ՕԺԱՆԴԱԿՈՒԹՅԱՆ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ ԿԱՐԳԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՈՐՈՇՄԱՆ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ԱՅԼ ԻՐԱՎԱԿԱՆ ԱԿՏԵՐԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ԲԱՑԱԿԱՅՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

«Իրավական օժանդակություն տրամադրելու կարգը սահմանելու մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության որոշման նախագծի ընդունմամբ՝ այլ իրավական ակտերի ընդունման անհրաժեշտությունը բացակայում է:

ՏԵՂԵԿԱՆՔ N2

«ԻՐԱՎԱԿԱՆ ՕԺԱՆԴԱԿՈՒԹՅԱՆ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ ԿԱՐԳԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՈՐՈՇՄԱՆ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ՊԵՏԱԿԱՆ ԿԱՄ ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄՆԻ ԲՅՈՒՋԵՈՒՄ ԾԱԽՍԵՐԻ ԵՎ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԷԱԿԱՆ ԱՎԵԼԱՑՄԱՆ ԿԱՄ ՆՎԱԶԵՑՄԱՆ ՄԱՍԻՆ

«Իրավական օժանդակության տրամադրման կարգը սահմանելու մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության որոշման ընդունմամբ պետական կամ տեղական ինքնակառավարման մարմնի բյուջեում ծախսերի և եկամուտների էական ավելացում կամ նվազեցում չի նախատեսվում: